**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

ՀՀ Լոռու մարզպետ Ա. Ղազարյանին

---

Խնդրում եմ Ալավերդի համայնքի ղեկավարի հետ քննարկել փաստաբան Ա.Բեժանյանի դիմումով բարձրացրած հարցը և պատասխանել դիմողին:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Invalid signature

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ. Սանոսյան

**№ ԳՍ/14.1/35820-2024** **“___“ ________2024թ.**

*Կատարող՝ Շողակաթ Նահապետյան*
*Հեռ.՝ 010 515-127*

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.1299639
29-10-2024թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Թղթային եղանակով

Հասցեատեր՝ *ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն*

Դիմող՝ *ԱՎԵՏԻՔ ԲԵԺԱՆՅԱՆ*
*ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ*
Հասցե՝ *ԼՈՌԻ, , ԱԼԱՎԵՐԴԻ, ԴԵԲԵԴ ԹՂՄ., 4, 13*
bezhanyan.avetik@mail.ru : 37498112146

## ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

11.10.2024թ–ի թիվ ԱՀ-3943/24 գրությամբ Ալավերդու համայնքապետարանից հայտնվել է, որ 06-112-0460-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի վերաբերյալ համայնքապետարանում որևէ փաստաթուղթ առկա չէ:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ գույքը չի հանդիսանում համայնքի սեփականություն /հակառակ դեպքում կլիներ տվյալ փաստը հաստատող փաստաթուղթ/:

Համապատասխան հարցում է կատարվել կադաստրի կոմիտե՝ գույքի պատկանելիության վերաբերյալ տվյալներ ստանալու համար, սակայն ստացվել է պատասխան այն մասին, որ նշված գույքի վերաբերյալ կադաստրային գործ առհասարակ առկա չէ:

Վերոգրյալից ելնելով՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե.

1. Արդյոք Ալավերդի համայնքի Օձուն վարչական տարածքում գտնվող 06-112-0460-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հանդիսանում է պետական սեփականություն, թե ոչ:
2. Արդյոք նշված հողամասն ընդգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներում, թե ոչ:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Կից՝ 4 ֆայլ

Դիմող՝

ԱՎԵՏԻՔ ԲԵԺԱՆՅԱՆ